

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԵԼԵՔՐԱՆ ՈՒՆ 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Ցայտարարությունը ընդունվում է ամեն լիզուով.
Ցայտարարությունների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
ՏԵԼԵՔՐԱՆ ՈՒՆ 253.

ՀԱՐԱՔ ՓԵՏՐՎԱՐԻ 3

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՒ
ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ թէ՛ Ռուսաստանում 10 ռուբլի, թէ՛ արտասահմանում՝ 12 ռուբլի, իսկ արտասահմանում՝ 9 ռուբլի, իսկ արտասահմանում՝ 7 ռուբլի, իսկ արտասահմանում՝ 5 ռուբլի, իսկ արտասահմանում՝ 3 ռուբլի, իսկ արտասահմանում՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊՖԱԳՐԱՍՏԱՆԸ:
Օտարաբարակացիները պետք է գիտեն հետևեալ հասցեով՝ Тифлисъ. Редакция «МШАКЪ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք միայն գտնադատում ենք գիտելու. կապույտ գիրքը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պէտք է ուսումնասիրել և հաւանքել. Մատենագրություն. Նամակ երկուց. Նամակ Ղուբայից. Նամակ խմբագրություն. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զէյթունի դէպքերը. Վերջին տեղեկություններ. Վերջին դէպքերը Բաղրամյան. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Այնպիսի բաներ:

ՄԵՆՔ ՄԻԱՅՆ ԳԱՆՏԱՍՏԱՆԻ ԳԻՏԵՆՔ

Անցեալ տարի արդարադատությունների մի- նիստը, մի ընդհանուր դիմում անելով հասարակության, հրապարակեց աշակերտ մի- նիստը և օրէնքների վերաբերման մասին գործում: Մինիստրը ցանկանում էր, որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

(Իմ տառի պատմություն)

I ԵՐԵՎԱՆ

Հեռաւոր երկրում մի բարձր սար կայ: Կա- պույտ երկրի մէջ է նրա գագաթը, արծիւն միայն կարողանում է բարձրանալ մինչև նրա կէտը: Եղել են մարդիկ, շատ քիչ — հազիւ երկու կամ երեք հոգի, որոնք հրաման են ունեցել տեսնել աշխարհի հրաշքը: Նրանք են պատմել, որ կապույտ երկրի մէջ խորված գագաթը վերջ ու ծայր չունի: Այնտեղ քար ու հող չը կայ: Այնտեղ աչքը մի ծայր է տեսնում, բայց դա ծայր չէ, վերջ չէ. մի նեղ ու կլորիկ կէտ է ե- ղնում, կարծում են թէ սարի մարմինը էլ չէ բարձ- րանում: Բայց չէ, այդ կէտի վրա էլ վեր է ձգվում մի ուրիշ բան: Սուրբ օթկան է նա: Մատուռ է՝ մատուռ չէ, վանք է՝ վանք չէ, սեղան է՝ սեղան չէ: Բարձր և բարձր են գնում գիշերը եկած ձիւնի պէս սպիտակ պատերը: Մարդու ձեռքը չէ չինել նրանց. և մարդը չը գիտէ, ո՞ր են նը- րանք գնում և ինչով են ծածկված: Յարկ չէ երևում, աչքը տեսնում է պատերի վրա երկնքի կապույտ վարագույր միայն:

Ինչ կայ սուրբ օթկանի մէջ: Ոչ ոք չէ տե- ւել: Արդար մարդիկ հասել են միայն ձիւնա- փայլ պատերին, իսկ ներս մտնել — հրաման չէ եղել: Եւ նրանց տրվել է միայն երազ. երազ, որի մէջ նրանք տեսել են հրաշալի բաներ և ապա պատմել են մեր հայերին, մեր պապե- րին:

Հասարակության մէջ գործող մարդիկ, որոնք փորձառութիւն ունեն դատաստանա- կան գործերում և հետաքրքիր դիտողու- թիւններ են արել, կամ նկատել են ներկայ դատավարության պակասութիւնները՝ օգ- նէին նրան իրանց կարծիքներով, դիտողու- թիւններով և ծրագիրներով:

Երկրագործութեան մինիստրութիւնն էլ մի քանի անգամ դիմել է թէ՛ գիւղատնտե- սական ընկերութիւններին և թէ՛ առհա- սարակ հասարակութեան՝ հաղորդելու մի- նիստութեան այն բոլոր կարիքները, որոնք առաջ են եկել երկրի արդիւնագործութեան ասպարէզում: Որինակ, մինիստրութիւնը այս վերջին տարիները ցանկացաւ իմանալ հմուտ մարդկանց կարծիքը, թէ ի՞նչ ձևով կարելի է բարձրացնել գիւղատնտեսութեան զանազան ձիւղերը, օրինակ շերամապահու- թիւն, այգեգործութիւն, բամբակագործու- թիւն և այլն:

Ֆինանսների մինիստրութիւնն էլ հրա- ւիրում էր կարծիք յայտնել դիմու վրա աղիքի դնելու խնդրի մասին, և ուրախու- թեամբ ընդունում է ամեն մի առաջար- կութիւն կրեդիտի և արդիւնագործութեան զարգացման վերաբերութեամբ:

Այսպիսով հասարակութեան միջոց է արվում շատ խնդիրների մասին յայտնել իր կարծիքը և մասնակցել նրանց մշակու- թեան գործում: Եւ հասարակութիւնը, եթէ լուրջ վերաբերվել դէպի իր առօրեայ կեանքի վրա ազդող երևոյթները՝ կարող էր մի յայտնի չափով ինքը բարելաւել իր կեան- քը: Եթէ այն անձինք, որոնք մօտ ծանօթ են իրական կեանքի պահանջներին և տե- ղական առանձնապատկերներին, չեն յայտնում ոչ մի կարծիք դրանց մասին, զարմանալի չի լինի, եթէ ապագայում, երբ մի ուրիշ և կարգադրութիւն արդէն օրէնքի ոյժ կը լինի ստացած, օրէնքը կը

կէս գիշերին, ասում են, այնտեղ են հանգ- չում երկրի լոյսերը: Գիտենք որ մայր են մըտ- նում ամենքը — արեգակ, լուսին, աստղեր: Այն- տեղ է ամենքի մօր ծոցը: Այնտեղ քուն է մըտ- նում արեգակը. աստղերը միմեանց ետևից թռչում են, չոզեր կաթնեցնելով ծածկվում են այնտեղ: Լուսինը այն գիշերները, երբ ճանա- պարհորդութիւն չունի, այդտեղ է, արեգակի կողքին. և նրանք երկուսը — քայր և եղբայր — փարում են իրանց մօր ծոցում: Եղբայրը լու- սինն է: Այդտեղ նրանք բաժանեցին օրն ու գիշերը: Եղբայրը ասաց. «Գիտի՛ր, ես ցերեկը դուրս կը գամ, դու գիշերը դուրս ել:» — «Գի- շերը վախճանում եմ», պատասխանեց քայրիկը: «Իսկ ցերեկը» — «Ցերեկը ամառում եմ»: Եւ որ- պէս դի չամաչէ սիրուն քայրիկը՝ եղբայրը մօրից ստացաւ մի խորձ ասեղներ և տուեց քայրիկին, ասելով. «Ա՛ռ, ո՞վ որ քեզ նայէ, նրա աչքերը ծակիր այս ասեղներով»: Եւ այն օրվանից մենք չենք կարողանում նայել արեգակին:

Այնտեղ կան և շատ ուրիշ երկնայիններ: Մինչև արշալոյս, ասում են, սարի այն ծայրին աստուածային մեղմ աղմուկներ են տարածում հրեշտակների թևերը: Նրանք, լուսեղէնները, անդադար թռչկոտում են, գնում են, գալիս են, լուրեր են տանում, լուրեր են բերում, սպա- սաւորում են լուսաստաններին:

Եւ երբ մօր ծոցից քնաթռնակ դուրս է գա- լիս արեգակը՝ կապույտ երկնքի տակ բարձ- րան է կանգնում և դիտում է ամբողջ աշխար- հը: Ամեն ինչ, որ կայ, ապրում է՝ բաց ու ար- ձակ վիճակում է նրա առաջ: Դժգոհել նրանից անկարելի է: Աշխարհի չորս ծայրերը երևում են այնտեղից, ծով, ցամաք տարածված են ինչպէս ձեռքի ափի մէջ:

Հանդարտ ու սիրուն էր աշխարհը: Ասում են, որ

լինի պակասաւոր, անգործադրելի, և ան- նպատակաբար:

Եւ ահա այն ժամանակ կը սկսվեն զանգասներ՝ արդէն վերջացած, ձեւակերպ- ված հարցերի մասին, կը գրվեն խնդրա- դրեր, որոնց վերաբերութեամբ այլ ևս անկարելի կը լինի բաւարար վճիռ տալ մինչև մի յայտնի ժամանակ, երբ նորից բաւականաչափ նիւթ կը ժողովվի այս կամ այն օրէնքը վերաբերման համար:

Վտանգաւոր է մեր հասարակութեան մէջ տիրող տրամադրութիւնը, որ զրգում է նրան անգործ նստել, սպասելով որ միշտ ուրիշները մտածեն նրա փոխարէն: Այդ- պիսի անտարբերութեան հետեանքը կորուս- տաւոր է նրանով, որ նա մեռցնում է նա- խախտութեան զգացմունքը, ինքնագոր- ծութեան սաղմերը: Իսկ մի հասարակու- լութիւն, որ դարձրում է գիտակցաբար և ներգործական մասնակցութեամբ վերաբեր- վել շրջապատող կեանքին՝ նա դատապարտ- ված է մեռելութեան և անշարժութեան:

ԿԱՊՈՅՏ ԳԻՐԲԸ

(Պատմական դոկումենտ)

Այսպիսով լոյս տեսան կապույտ գրքի երկու հատորները, որոնք նուիրված են Սասունի գաւառում տեղի ունեցած եղելութիւններին: Առաջին հատորը պարունակում է իր մէջ Սա- սունի դէպքերը և պատմում է այն պարագա- ները, որոնք դրեցին նշանակել յատուկ քննիչ յանձնաժողով: Այդ հատորի մէջ գետնդված է և հիւպատոսական ներկայացուցիչների միջանկազ- նակագրերը: Երկրորդ հատորը նկարագրում է յանձնաժողովի գործունէութիւնը:

Գրքը սկսվում է մի հաղորդագրութեամբ, որի մէջ հանգամանօրէն պատմված են այն

այն ժամանակները այլ ևս չեն վերադառնալ: Հրեշտակները չըլնում էին մարդկանց մէջ, խուռ- կի ու կնքուկի հոտ էր բուրում ամեն տեղ: Բայց ահա թէ ինչ պատահեց մի տարի: Ամեն էր: Երկնքը չէր պարզում, ձիւնը կոյտ- կոյտ բարձրանում էր: Լինում են ցրտեր, որոն- ցից երկնքը, արեգակը էլ է սառչում: Այլ ևս չը կային ջրեր. սառնուցը հասել էր գետի յա- տակին: Դժակում ծառերը հառաչում էին, ձաք- վում: Սառել, կոտորվել էին երկնքի թռչուննե- րը, արջը իր բունի մէջ էր փայտանում:

Այդպիսի պատուհաս դեռ չէր իշխել երկնքից... Այն միջոցին փէշերին թիկն տուած՝ բազմ մաթիւ գիւղերի ցաւերի, տանջանքների օրեր էին անց կացնում: Տաք անկիւն չէր մնացել, կրակն էլ կարծես ցրտացել էր: Այդպիսով չը կար, մարդիկ կոտորվում էին ճանճերի նման:

Չիմանալ թէ ցուրտն էր այդքան կոտորում: Նրանից սարսափելին սոյն է, սեւերեւը:

Սով էր... Գանդաղ մաճը, ամենասարսափելին բոլոր մահերի մէջ, չըլնում էր տնից տուն, օջա- խից օջախ, պուճախից պուճախ, անկողնից ան- կողին: Մարդիկ չը կային այլ ևս, կային միայն կիսակերներ. նրանց չարժում էր անտանելի կրա- կը, որ այրում, սողորում էր նրանց ներսը: Այդ կրակն էր, որ ոչ ոքին չէր խնայում: Տուն չը կար, որ վարակված չը լինէր, մարդ չը կար, որ սովի սե երեսը տեսած չը լինէր:

Եւ լեռնաստանը, կտրված աշխարհից՝ մենակ, անտէր, մեռնում էր: Ամայի էին դարձել ճանա- քարհները, ոչ ոք չէր գալիս, ձայն ու ծպուտ չէր հասնում: Գալիս էին միայն, որ գնում էին դէպի մարդիկ, այն էլ ինչ մաղով...

Բայց մարդու ցաւը միշտ տեսնող կայ: Ամեն օր սարի գլխից ցած էր իջնում մի մարդ: Նա չէր շտապում, նրա քայլերը զանգաղ էին, ձիւնի վրա միանման դրօշ էին դնում:

բոլոր եղելութիւնները, որոնք տեղի ունեցան Սասունում, սկսած 1894 թվի աշուրից մինչև 1895 թվի հոկտեմբերը:

Այդ հաղորդագրութիւնը պատկանում է պաշ- տօնական անձանց գրչին, ինչպէս են անգլիա- կան փոխ-հիւպատոս Հօլուարդ և ուրիշները:

Սասունի կոտորածից առաջ տեղի ունեցած հանգամանքների մասին հիւպատոսական ներ- կայացուցիչները հաղորդում են հետևեալը.

Կոտորածից մի քանի տարի առաջ հայերի և քրդերի մէջ սկսվեցին լարվել փոխադարձ յա- րաբերութիւնները և դարձան թշնամական: Քիւր- դերը յաճախ անհանգստացնում էին հայերին, բայց հայերը սկսեցին լուրջ դիմադրութիւն ցոյց տալ այն օրից՝ երբ նրանց մէջ երեսց Համար- ձում Բօյաջեան կամ Մուրադ անունով գործիչը: Թիւրքական պաշտօնականները ամեն կերպ աշխա- տում էին ապացուցանել, որ իբր թէ Սասունի հայերը ապստամբութիւն էին հրատարա- կել Թիւրք կառավարութեան դէմ արդէն մայիս ամսին, սակայն այդ բանը ոչ մի կերպ չի հաստատվում: ձիւն է, կայ մի թուրք Մուրա- դի մասին, որ թուրքերը համարում էին իբրև պաղաքական մի ծրագիր, բայց հետազոտութիւնից պարզվեց, որ դա մի գրութիւն է զանազան եղելութիւնների մասին: Եթէ իսկապէս ապա- տամբութիւնը սկսված լինէր մայիսի սկզբից, ինչպէս ձգտում է ցոյց տալ Գեւորջի միւլթեսարի- ֆի դեկլարացիոն՝ միթէ Թիւրքերը ամբողջ երեք ամիս, մայիս, յունիս, յուլիս, կը սպառէին ստանց որ և է գործողութիւն սկսեցին:

Թիւրքական վկաները բացատրում են Թիւր- քերի կատարած աւերումները և կոտորածները, վերադառնալով այդ բոլորը հայերին: Յանձնաժողովի եւրօպական ներկայացուցիչները ցոյց են տալիս, որ հայերը չէին կարող իրանք իրանց աները ընտել և այրել, անարգել իրանց եկեղեցիները, Գլուխը կախած կրծքի վրա, դէմքին դրօշմած մի անհուն վիշտ՝ նա կանգ չէր առնում, չըլնում էր գիւղից գիւղ, լուռ նայում էր ու տեսնում: Եւ երբ ցաւերի օրը միջնում էր՝ նա նոյն ճանա- պարհով յետ էր դառնում...

Նա, միայն նա գիտէր, թէ ինչպէս է կոտոր- վում մոռացված, կորած ժողովուրդը:

Մի ամիս առաջ այս տեղերում մարդկային կեանք ու ձայն կար: Սով էր, բայց դեռ գոռն- վում էր կերակուր: Անասունները ապուռ չու- նէին և կոտորվում էին, նրանց կերան մարդիկ: Հերթը հասաւ անմաքուր գրաստներին. նրանք էլ դնացին: Իսկ ձմեռը յետ չէր գնում, առաջ էր գնում: Զէին կշտանում մարդիկ, օր օրի վրա գաղանախում էին, ապամը այլ ևս ընտրութիւն չէր անում: Փայտը առատ էր, բայց կրակ չէր վառվում. կերակուր երկուս համաբերութիւնը կորաւ: Այն ժամանակ սկսվեցան մահերը: Ու- տել, ուտել... Գա ամբողջ չէր, դա ցաւ ու կրակ էր, որ լափում էր ամենքին:

Կատաղած, յուսահատ մարդիկ այլ ևս ոչինչ չէին հասկանում. հայր կար, այժմ չը կայ, մայ- րը չէ ճանաչում իր երեխաներին, եղբայրը եղ- բոր չէ նայում: Ամենքը ցրվում էին, բայց ո՞ր: Ամեն տեղ ձիւն էր, ամեն տեղ սով էր: Անու- վոր ձայներ էին բարձրանում: Մէկը տունում էր, միւսը բաւաշում. երեսան խախտացնում էր, ծերը բաց էր անում բերանը, բայց ձայն չէր դուրս գալիս, կանաչը կուրծք էին ծեծում: Ա- մենքի դէմը դէպի երկնքը էր ուղղված. նրան էին պաղատում... Իսկ երկնքը ստուգում էր, ստուգում, ձիւնը թափվում էր, ձիւնը չէր զաղա- րում:

Այսպէս օրեր, շաբաթներ անցան: Գիւղերը հալվել էին, կորել. մի քանիսի մէջ այլ ևս մար- դու նշան չէր երևում: Իսկ մենաւոր այցելուն դեռ նոյնն էր, նոյնպէս անխօս, նոյնպէս դան-

կատարել այնպիսի խայտառակութիւններ, որոնց մասին պատմել անհնարին է: Այդ բոլորը քեր-
դերի և թիւրք զինուորների դրո՛ծ է:

Անգլիական փոխ հիւպատոս Հօլուարդը, որ տեղեկացրել է իր կատարութեանը բոլոր եղելութիւնների մասին՝ 1894 թ-ի հոկտեմբերի 31-ին, զեկուցագրում է պաշտօնագրէս հետեւեալը.

«Ինքն իսկ վաղէն զօրք է պահանջել օգնու-
թեան համար: Համաձայն այդ պահանջի՝ ու-
ղարկեցին զօրքեր երգնկայից, խարբերչից, Կի-
արբէրից, էրգրումից և վանից: Երբ որ նրանք տեղ հասան՝ Սեմալի, Շենքլի և Գիլիե-
զուզանի հայերը անձնատուր եղան՝ նրանց՝ լըն-
դրելով ապահովութիւն քերդերի դէմ. բայց զին-
ւորները սկսեցին անխնայ կոտորել բոլոր անձնա-
տուր եղածներին: Նրանք կողոպտում էին բոլորի
զոքը և այլու՝ հայերի տները: Ամբողջ օրեր
չարժանկելով այդ չարագործութիւնը՝ նրանք
աւերեցին մինչև քսան և հինգ գիւղ: Փիւրդերը
խկապէս աւելի զբաղված էին ոչխարի և մեծ
տաւարի հօտեր դուրս քշելով, նրանք մարդկանց
չատ վնաս չը տուին կոտորելով: այլ գերեցին
աղջիկներ. իսկ զինուորները թող էին տալիս
բռնաբարել կոյսերին: Եկեղեցիները սրծում էին
և այրվում, իսկ քահանայական զգեստները և
եկեղեցական անոթները ծախու հանվեցին
նոյն իսկ Մուշի վաճառանոցում: Պատմում են
ակնաստեսները, որ մարդկանց այրում էին և օդն
էին թռցնում վառօդով: Գալուրիկի մի կին
պատմեց ինձ, որ երեսուն հօգու զինուորները
թաղել են ողջ հողի մէջ. այդ միևնոյնը են
լսեցի ուրիշներից, բայց տեղն ու տեղը ըննելու
կարողութիւն չունեմ:»

(Կը չարունակի)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԲ Է ՌԵՍՈՒՄԵԱՍԻՆԵԼ ԵՒ ՀԱՒԱՔԵԼ

Գիւղական հին կեանքը փոխվում է, ժամանակը
օրհասական ձեւերով չնջում է մեր ժողովրդական
կեանքի ուսումնասիրութեան համար անգին գան-
ձեր: Արագութեամբ անհետանում են բազմաթիւ
գեղեցիկ աւանդութիւններ, ասացումներ, ա-
նէճներ, օրհնութիւններ, երգումներ, որոնք հին
հայկական հեթանոսական կրօնի պարզաբանու-
թեան համար մի-մի լուսատու ջահեր կարող էին
լինել. հանեանում են և բազմաթիւ սովորու-
թիւններ, տօներ, հանդէսներ, որոնք հին հայի

զաղաչարժ: Կարծես նա դեռ մեծ ցաւ չէր հա-
մարում այդքանը:

Մի օր փոխվեց նա: Կանգնած էր մի տան ա-
ռաջ: Տեսաւ, ահա դուրս սողաց մի կմախք: Առ-
վը այնպէս էր կրծոտել նրան, որ առաջին ան-
գամից չիմացկեց, թէ դա մի կին է: Կարծես նա
աշխարհ ու երկինք չէր տեսել. չչկված էր,
կարծես թէ հարկաբարձ փայտերով ծեծել էին
նրա գլուխը: Սարսափելի էին նրա մի զոյգ աչ-
քերը, որոնք տնկվել էին ոսկորացած դէմքի վրա.
աչքեր չէին, նոր վառված ածուխներ էին նրանք.
մարում են, նորից փայլում... Մի բան է որո-
նում կմախքը: Նայեց երկնքին, մի զարհուրելի խոռո
արձակեց և թեքվեց, մէջքի վրա ընկաւ: Մե-
ռաւ... Չէ, նա սողում է, նա որոնում է: Ձիւնի
վրա սկսին էր տալիս մի ինչ-որ կոյտ: Դէպի
այնտեղ գնաց նա թափափելի վրա: Գտաւ: Ընկաւ
կրծքի վրա, բարձրացրեց տաւն հատ մասներ,
զարհուրելի, իբրեւ երկաթէ ճանկեր, ազահու-
թեամբ խրեց ձիւնի մէջ, բռնեց: Գաղանի աղը
էր նրա գտածը: Կերակուրը յոյս ներշնչեց, նա
կանցնեց, մեռելային քրքիջը աւելի ալանդա-
կեց նրա դէմքը, ապա փոխվեց ուրախութեան
խոխոցների: Ներս մտաւ տնակը, այդտեղ
ուռվէ էր, գերեզմանի նման. զաղբալի հօտը
դուրս էր հասում բայց գոնեւորով: Խուռոցը սաստ-
կացաւ. չարժեքան մի քանի գիւններ, ձայներ
էին հանում և նրանք. մի ակնթարթում՝ գտած
կերակուրը յափշտակվեց, անյայտացաւ կրակ ու
ցաւ դառած բերաններում...

Մենաւոր այցելուն ծանր, ծանր կերպով չար-
ժեց իր գլուխը: Հանապարհին նա նորից կանգ
ստաւ: Այս տանը երէկ տեսել էր նա կիսամեռ
սօրը, որի կրծքին կպած էր մանուկը: Ներս է
նայում: Դէմքի մօտ դեռ նստած է մայրը, մէջքը
պատին տուած: Նա արդէն կապտել է, սառել.

նիստ ու կացը, նրա առանին կեանքը ճշմարտա-
պէս պատկերացնելու համար անգնահատելի են.
Ժողովրդական բանաստեղծութեան թանկագին
փշրանքներ կարծում, ծածկվում են մոռացու-
թեան քօղով և իրանց հետ միասին ծածկում
հայ ժողովրդի հոգու հայելին, նրա գաղափարե-
րը, հաւատալիքները, աշխարհայեցողութիւնը,
բարոյական սկզբունքները: Հապա ճէքիւթները,
որոնք մեր զիւցաղնաբանութեան միակ աղբիւ-
րներն են, սակայն սրանք էլ են ծածկվում
ժամանակի ծալքերի խորշերում:

Մի խօսքով մոռացութեան է դատապարտ-
վում մի ամբողջ ժողովրդական կեանք: Պէտք է
փրկել այդ կեանքը. դա մեր ժողովրդական
կեանքն է, դա այն աղբիւրն է, որից ոգևորու-
թիւն պէտք է ծծի մեր նոր կեանքը, որից պի-
տի պաշար ստանայ նորածին գրականութիւնը,
մեր պատմութիւնը, մեր գեղարուեստը, լեզուն:
Պէտք է փրկել ժամանակի աւերիչ ժանիքներից
գոնէ այն, ինչ որ տակաւին անաղարտ է մնա-
ցել, ինչ որ չէ խճճվել, չէ ալանդակվել, չէ
անհետացել... Գեռ ապրում են մի քանի հինո-
րեայ ծերունիներ, անցեալ կեանքի այս ան-
խաղախ աւանդապահները. դեռ չեն մեռել
«ճօշ մանանեք», որոնցից իւրաքանչիւրը մի-մի
ամբար է ժողովրդական նիւթերի. կանցնեն էլ
մի քանի տարիներ, հին սերնդի այս մի քանի
հատիկ ներկայացուցիչներն էլ կը թողնեն այս
աշխարհը, և այն ժամանակ ուշ կը լինի, որով-
հետեւ սրանք իրանց հետ կը ծածկեն թանկագին
նիւթերը:

Պէտք է շտապել գրի առնել: Բայց ինչպէս,
ո՞վ պէտք է մեր ժողովրդական կեանքի խորշե-
րը մտնի, ո՞վ պէտք է հայ գիւղացու, հայ պա-
ռաւի, հայ աղջկայ հետ խօսի, նստի թոնրի
հատիկ ներկայացուցիչներն էլ կը թողնեն այս
աշխարհը, և այն ժամանակ ուշ կը լինի, որով-
հետեւ սրանք իրանց հետ կը ծածկեն թանկագին
նիւթերը:

բայց երեխան դեռ բերանում բռնած ունի ծի-
ծը: Մօտենում է տեսնում, որ երեխան էլ է
փայտացել: Խեղճը որքան էր աշխատել մի բան
դուրս ծծել: Նրա լայն բերանի վրա ստաւ էր
կարմիր արիւնը, որ կարմիր էր ներկել և մօր
ծիծը:

Կարծես կրակ թափվեց այցելուի վրա: Նա
խորը հառաչեց և այս անգամ չտալ քայլերով
գնաց դէպի բարձր, թէև օր դեռ շատ կար:
Կտրեց նա ուղիղ ճանապարհ ծմակների միջով,
ժայռերի վրայով: Այլ ևս տեսնել չէր ուզում նա
մարդկային թշուառութիւնը: Բայց ճանապարհը
դեռ չէր վերջացել: Մի տեղ, գիւղի կողքին, նա
տեսաւ զարհուրելի կոխ: Մի քանի կանաչ ու-
ղում էին խել մի գայլից փոքրիկ երեխային
Արդէն մի ոտը յաղկել էր գաղանքը, բայց նրան
հալածողները յաղթեցին, նա փախաւ, իսկ կա-
նաչը հէնց այնտեղ յօշոտեցին փոքրիկ գիւղը և
բաժանեցին իրանց մէջ:

Յանկարծ բուրբ բարձրացաւ, սևացրեց օրը:
Ձիւնները վեր կացան, դէս ու դէն ցրվեցան, ամ-
բողջ աշխարհը սկսեց հեծեծալ, ուռալ: Մենա-
ւոր այցելուն անյայտացաւ, ուր գնաց, ինչ ե-
ղաւ—ոչ ոք չիմացաւ: Այն օրվանից այլ ևս նա
չերեաց այդ կողմերում:

Այդ գիւղի զարմանք էր կապտել երկնքի
մէջ խրված սարը: Հեռու, հեռու տարածվում
էին ձայներ, սիրտ կտրատող մորմօքի ձայնը:
Կանչում էին այնտեղից: Աշխարհի չորս կողմե-
րում լսեցին, իմացան թէ ինչքն են կատար-
վում մեծ սարի վրա, այնքան գիւղերում: Մար-
դը մարդու միտ է ուտում և էլի չէ կշտանում:
Երեխան մօր արիւնն է ծծում: Կոտորվում են,
կոտորվում են...

Այսպէս էին ձայն տալիս ամեն տեղ: Մե-

որ կան ինտելիգենտներ, որոնք սիրով յանձն
կառնէին գլուխ տանել այս հանրօգուտ ձեռ-
նարկութիւնը, եթէ նրանց չը պակսէին նիւթական
օժանդակութիւն: Թողնե՛ք այն, որ շատ գաւա-
ռական ուսուցիչներ ուսումնական տարվայ ըն-
թացեում, նոյն իսկ տօներին, կարող էին չըջել
գիւղերը, իրանց չըջակաները, եթէ գոնէ ճանա-
պարհածախ ունենային: Ուշադրութեան առ-
նենք և ամարային արձակուրդները, երբ ուսու-
ցիչները բոլորովին ազատ են և կարող են ահա-
գին ծառայութիւն մատուցանել այդ գործին, ե-
թէ նիւթական օժանդակութիւն տրվի նրանց:

Թող այս գործը գրաւէ առհասարակ բարեգործ
անձանց առանձին ուշադրութիւնը: Ժողովրդա-
կան կեանքի ուսումնասիրութեան գործի աջո-
ղութեան ծառայելը, մեր կարծիքով, հաւասար է
առաջնակարգ բարեգործութեան:

Ա. Ահարոնեան

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Սե ծովու ուսական եղբրք» — Կ. Տիւրեանի,
վիէնա, 1895

Հանապարհօրդական նկարագրութիւնները ի-
րանց պատուաւոր տեղն ունեն գրականութեան
մէջ: Նրանք տալիս են ընթերցողին թարմա-
ցնող, առողջարար նիւթ, լայնացնում են նրա
հասկացողութիւնները, հրապուրում են բնու-
թեան գեղեցկութիւններով, զանազան անձանոթ
տեղերի ինքնուրոյն կեանքի առանձնայատու-
թիւններով: Ուղեւոր, սակայն, պիտի իմանայ
թէ ինչ է պահանջում ընթերցողը: Ուշադրու-
թիւն դէպի ամեն մի երկրով, որ հետաքրքա-
կան է, ամփոփ և որքան կարելի է լիակատար
տեղեկութիւններ տեղերի պատմական, տեղա-
գրական հանգամանքների մասին, ընդունակու-
թիւն արտայայտել այն տպաւորութիւնները, ո-
րոնք թողնում են բնութիւնը, մարդիկ, պատ-
մական յիշատակաբանները, վերջապէս պատմե-
լու, նկարագրելու մի սիրուն ոճ, որ կատարե-
լապէս համապատասխանէր առարկային—ահա
ինչ պայմաններ են հաղորդում ճանապարհորդա-
կան նկարագրութիւններին հետաքրքրական, զը-
բախչ գրութեանքների ամբողջ գեղեցկութիւնը:

Կ. Տիւրեան, որ նկարագրում է Սե ծովի ա-
փերը՝ Բաթումից սկսած մինչև Օդէսա՝ դիտող,
հասկացող, լաւ տեղեկ ուղևոր է: Նա տալիս է
համառօտ տեղեկութիւններ, ընդունակութիւն
ունի նկարագրելու, պատկերացնելու, հաղորդում է
իր տպաւորութիւնները հմտութեամբ: Հայ ըն-

դանից լաւերը, թեւի թափ տալով, դռներ էին
ծեծում, մարդ էին կանչում: Իսկ սարի ծայրին,
սուրբ օթեանի առաջ, արձանացած էր մէկը:
Լայսերը չողչողում էին նրա չուրջը, իսկ նա
սխտուր, վշտահար դէմքը խոնարհած դէպի ցած,
ձեռքերը ծալած կրծքի վրա՝ նայում էր, նայում
և սպասում էր:

Տեսնում էր նա ամբողջ աշխարհը: Նրա աչքի
առաջ էին խաղաղ ու երջանիկ երկիրներ, ուր
ապրում էր մարդը, ուր ուրախ և անհոգ էր
նա: Յաւեր չը կային, հառաչանք չէր լսվում:
Աստուծո օրհնութիւնը տարածված էր ամեն
տեղ: Եւ աւելի ու աւելի բարձր էին հնչում գի-
չերային ձայները: Ձիւնափայլ օթեանից տարած-
վում էին շատաւրդները, հեռու և հեռու էին
գնում, զարմանք և հիացում էին տանում ամեն
տեղ: Իսկ նա, վշտահար մարդը, անշարժ կանգ-
նած էր, և նայում էր, և սպասում:

Այն գիւղերային պահուն մարեցին բոլոր ձայ-
ները: Եւ տեսնում էր նա, որ նայում էր սարի
զաղաթից՝ թէ ինչքն են կատարվում աշխարհի
վրա: Ոչ ոք չը կանգնեց, ոչ ոք մի քայլ չարա-
դէպի այն կողմը, ուր հրաւիրում էին օգնութեան
ձայները: Ամեն մէկը նստած էր իր տանը, ու-
րախ, ծայտալով իր հաշիւներն էր դրստում: Խօսք
ու զրօյց շատ կար գիւղերային ձայների մասին:
Վիճում, դատում էին, թէ ինչ պէտք է անել:
Բայց տեղից չը չարժեքան, ուրացան, մոռացան
որ կայ արտասուքների և ցաւերի երկիր:

Թուշում էին թեւաւորները ամեն կողմից: Խըմբ-
վեցան նրանք սուրբ օթեանի մէջ և զանգառանե-
րի, զգոհութիւնների ձայները իրար խառնեցին:
Քար էին գտել մարդկանց սրտի մէջ. ոչինչ չէ
աղղում, չը կայ մէկը այդ միջոցին, որ չը մտա-
ծէ թէ ինչպէս առնի շատ, հաւաքի, գիւղէ: Մար-
դիկ ժամանակ չունին... Եթէ մեծ սարի այն

թեւրդի համար, ի հարկէ, բոլորովին անձանօթ
են այն տեղերը, որոնց նկարագրութիւնը տալիս
է Տիւրեան: Սե ծովի արեւելեան ափերը, Ղրիմը
իր հարուստ բնութեան հրաշքներով, հարաւային
Ռուսաստանի հպարտ թագուհին, Օդէսան, բոլոր
շատ թէ քիչ նշանաւոր տեղերը, նաւահանգիստ-
ները, ամարանոցները, մանաւանդ այն տեղերը,
ուր ապրում են հայեր՝ ուղևորը նկարագրել է
բարեխղճութեամբ, պահպանելով այդ նկարա-
գրութիւնների մէջ յայտնի չափ, ներդաշնակու-
թիւն: Ամեն ինչ կայ մի թեթեւ, անորոշելի ըն-
թերցանութեան համար: Ուղևորը պատմում է
անցեալը, բայց չէ մոռանում ներկան,—տալիս է
պատկերներ, ծանօթացնում է բնակիչների հետ,
հարկաւոր տեղերում էլ դնում է իր անձնական
տպաւորութիւնները, ճանապարհորդի կրածը,
փորձանքները:

Գրքի այս գեղեցիկ յատկութիւնների հետ
չենք կարող չը յիշատակել և այն թերութիւնը,
որ ներկայացնում է հեղինակի լեզուն: Գա-
թիւրքահայերի և ուսանալների գործածական
լեզուների մի խառնուրդ է: Գոցե՛ք գիրքը նշա-
նակված է արեւմտեան հայերի համար, գոցե՛ և
պ. Տիւրեան կամեցել է ցոյց տալ, թէ կարելի է
երկու բարբառները հաշտեցնել միմեանց հետ,
միացնել: Այսքանը մենք կարող ենք ասել, որ
մեզ, ուսանալների համար, աւելի հաճելի կը
լինէր՝ եթէ հեղինակը գործածէր կամ մաքուր
թիւրքահայ բարբառը, կամ թէ մերը: Տեղի պա-
կասութիւնը մեզ չէ ներում ցոյց տալ, թէ որ-
քան ծանր և անմարս է գրքի լեզուն շատ տե-
ղերում: Եւ այդ աւելի քան ցաւալի է. հեղինա-
կը զրանով գցել է իր նկարագրութիւնների ար-
ժեքը, կասե՛ք աւելի—հարստահարել է իր ու-
ժեղ, ճկուն և պտտկերացնող ոճը:—Ինչպէս
յայտնի է արեւելեան հայերը իրանց գրական
լեզուի հարստութիւնը հիմնում են ժողովրդա-
կան լեզուի վրա, իսկ արեւմտեան հայերը, ընդ-
հակառակն, դեռ երազում են գրաբար ոճերը,
զարձուածները կենդանացնել աշխարհաբար
մէջ: Ապագիւն է այդ աշխատութիւնը, մինչև
այժմ վիէնայի, բայց մանաւանդ վիէնայի
Միլիթարեան հայերի գործածած լեզուն, որ
աշխարհաբար զարձրած գրաբար է՝ հեռու է
մնում ժողովրդի հասկացողութիւնից և մատչելի
է մի նեղ շրջանի: Եւ ինչպէս պ. Տիւրեան զրկել
է իր գիրքը, հետեւելով Միլիթարեանների լե-
զուին ու ոճին,—այդ մեղ համար անհասկանա-
լի է:

Լ.

լանջերի վրա, ուր ուտում են միմեանց, ուր
հայրը մոռացել է որդուն, լինէր օգուտի մի չըն-
չին նշան՝ շատերը կը շտապէին այնտեղ: Բայց
չը կայ, և ամեն մէկը ասում է. «Է՛հ, ինչ գործ
ունիմ:»

Գիւրկայ այն ժամանակն էր, երբ այլ ևս բաց
աչքով մարդ չէ լինում: Տիրում էր ամեն տեղ
խոր, գերեզմանական լուսութիւն: Աստղերը իջ-
նում էին երկնքից իրանց մօր ծոցը. խառալը
թանձրանում էր: Այդ ժամին ահա նորից երեաց
սուրբ օթեանի առաջ այն վշտահար մարդը: Ձեռ-
քերը կրծքին ծալած, գլուխը կորացրած՝ նա
ձայն հանեց: Ամեն տեղ, ամեն անկիւն հատա-
այդ ձայնը: Պարզ էր խօսքը, կարճ էր նրա ա-
սածը:

—Երես չը մնայ, որ ամաչի. պնդանան բոլոր

երեսները...

Անէճը սարսափելի էր: Այն օրվանից աշխար-
հը հեծում է այդ դժբախտութեան տակ: Ամենից
առաջ պնդացաւ երկրի երեսը: Պտուղ շատ քիչ
է տալիս. մարդիկ միմեանց ձեռքից խլում են,
արիւն-բրտինք են թափում, բայց ոչինչ չեն ձեռք
գցում: Մի կտոր հացի համար, մի գրօ չափ
համար միմեանց կոտորում են, միմեանց մի ու-
տում: Անթիւ ու անհամար թշնամութիւններ են
եկել այն օրվանից և դեռ այսօրհետ որքան
պիտի գան... Լաց, հառաչանք, արիւն, սով
կրակ ու անէճը—ամեն ինչ թափում է երկնքը:
Եւ մարդը, թշուառականը, տանում է և պիտի
տանէ, չը զգալով իր գրութեան սարսափը:

Օր օրի վրա վատանում է նրա աշխարհը, կը-
րակ է դառնում նրա ապրուստը: Այդպէս է ա-
նում այն անէճը, որ պնդացրեց նրա երեսը:

Լէօ

ՆԱՍՏԱԿ ԵՑՍԿԻՅ

Յունվարի 10-ին
Գեկտեմբերի երկրորդ կեսերում, այստեղի հայոց հասարակությունը այնպիսի մի եռանդուն գործունեություն ցույց տուց, որ, արժանի է ուշադրության և համակրանքի: Այստեղի հայ երեխաները զուրկ են բոլորովին մայրենի լեզուի գիտությունից, որովհետև նրանք իսկ դպրոց չունեն: Հենց այս պատճառով ըստի մի անգամ ժողովներ են եղել, բայց դժբախտաբար անհաջող մի ցանկալի հետևանքի: Վերջապես գեկտեմբերի 17-ին կայացավ ժողով, որին մասնակցում էին երեսուն հինգ հոգի, մի թիւ՝ որի հաւասարը երբեք չէ եղել այստեղի ժողովներում: Երկար վիճաբանությունից յետոյ վճռվեց՝ ընտրել եօթը հոգուց բաղկացած մի յանձնաժողով և տալ նրան կատարել լիազորություններ նույնիսկ հաւաքել՝ միջառարանան ծխական դպրոցի շինությունը կառուցանելու և գոյությունը ապահովելու: Յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Գ. Զեքուրյան, Մ. Մահմադյան, Մ. Մահմադյան, Ս. Մահմադյան, Գ. Շուրիկյան, Գ. Շուրիկյան, Բ. Շուրիկյան, Ս. Մալիկյան և Մ. Նաւասարդյան: Ընտրությունից յետոյ ժողովը խնդրեց քանակալին, որ ընտրվածների անունացուցակը արձանագրության հետ, և մի խնդրագիր ևս հասարակության կողմից՝ ուղարկել Աստիքյանի հայոց կոմիտեին, որ վերադարձնի խնդիրը: Եւ արդեւ չի հանդիպել կոմիտեի անդամների կողմից, մասնաւոր ներկայ լուսավոր առաջնորդի օրով: Այս տարի ձմեռը շատ խիստ է այս կողմերը, դաշտերը ծածկված են խորը ձյունով, որ մեծ յոյսեր է ապրիս երկրագործին: Ազով ծովը ծածկված է ամբողջովին հաստ սառուցով, որը շատ դժուր է անցնել հաստ ձյունի տակ: Եւ չորակալ ընտանիքները ձյունի տակ մնալով պարտաւոր: Գործին մօտիկ ծանօթ մարդիկ հաւատարմութեամբ են, որ եթէ մի երկու շաբաթ ևս այսպիսի ցրտեր չարձանակվելու լինեն, այն ժամանակ էլ չի բաժնուր կը կարողանայ, կարճ միջոցում, 100,000 բուրգու օգուտ ունենալ:

ՆԱՍՏԱԿ ԴՈՒՍՏԱՅԻՅ

Յունվարի 27-ին
Ղուբայի թուրք ազգաբնակչության այն մասը, որ այստեղ անշարժ կայեցի ունի՝ մտադրվել է Բաղդադի նահանգապետին խնդրել ներկայացնել, որպէս զի ապագայ տարվա համար, Ղուբայի դուռնան բացվելու ժամանակ, իրանք նոյնքան ձայններ ունենային, ինչքան քրիստոնեաները: Այստեղ էլ, որիչ քաղաքների նման, մահմադականները օգտվում են առ. այժմ 1/5 ձայների իրաւունքով, այն ինչ մնացորդ 4/5 ձայների իրաւունքը պատկանում է քրիստոնեաներին: Այսպէս ցույց կը տայ, թէ ինչ տեսակ կարգադրություններ կը լինեն:
Աւելորդ չենք համարում այս առիթով մի երկու տեղեկություններ հարցրել այստեղի ազգաբնակչության թւի մասին: Հայ և ռուս բնակիչների թիւը հասնում է երեք հարիւրի, այն ինչ թուրքերը հրեաների հետ խառը՝ մօտ 10 հազար են (մօտ 1,200 տուն): Այս թւանշանները ցույց են տալիս, թէ ապագայ ինքնավարութիւնը ինչ գործիչներ կունենան: Այդ պայմաններում ցանկալի է, ինչպէս և «Մշակի» առաջնորդողն է նկատում, որ մահմադականներից ընտրված ձայնաւորները լինելին խտենդեղնա մարդիկ, որպէս զի նրանք բարեխղճաբար կատարելն իրանց պարտաւորութիւնները և աշխատելն ժողովրդի և քաղաքի բարեկեցութեան համար:
Առ այժմ քաղաքապետի պաշտօնի թեկնածուներ համարվում են երեք մարդ, ուսանելից՝ Ի. Ֆեօդորով, Թուրքերից՝ Բալաբէկ Հասանբէկով և հայերից՝ Սեդէյէ-բէկ:
Թուրքացի դաւադարանում հայ անդամների թիւը աւելանում է: Բացի «Մշակից», որ ստացվում է մտադիր են բերել տալու և թիւրքահայոց մի լրագիր: Հրեաներից էլ ութ մարդ անդամ գրվեցին: Պիտի ստացվեն հրեաներ երկու լրագիր: Ստացվում են ամեն կողմից նախադասութիւններ, մինչև անգամ վրացիներն էլ են մասնակցում:
Ցրտերը սարսափելի են: Ասում են, որ Բաղդադի համապարհի վրա սառել են 3 մարդ:

Վայրենի հնդկահաւեր, կշռով 15 ֆունտից էլ աւել, և այլ թռչուններ, չը դիմանալով ցրտերին, վայր են թափվում: Փայտահատները նրանց բռնում, փողոցում ծախում են, հատը 70 կ.:
Մ. Ս.

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՈՒԹԻՅԱՆ

Վաղարշապատ, յունվարի 11-ին
Կովկասի հայոց Բարեգործական ընկերության Վաղարշապատի ճիւղի վարչութիւնը յունվարի 5-ին «Աւետիս» ման գալով և ժողովելով ճիւղի օգտին 90 բուրգի՝ պարտք է համարում հրապարակով հարգելալով ինչ յայտնել, նախ Վաղարշապատի հասարակութեան, նրա սիրալիր ընդունելութեան և առատաձեւն նուիրատուութեան համար, ապա տիկին Մ. Թումանյանին և օր. օր. Տ. Ալանյանին և Վ. Աւետիքեանին, որոնք ուղարկութեամբ յանձն առան վարչութեան անդամներին հետ «Աւետիս» ման գալ:
Նոյնպէս հարգելալով ինչ անդամներին՝ Մ. Զարգարեանց, Ա. Գալսեփեան և Ս. Գանիբէկեանց, որոնք «Աւետիս» ման գալով իրանց ժողոված գումարը ինքնակամ նուիրեցին ընկերութեան տեղական ճիւղին:
Նախագահ վարչութեան՝ Ա. Օհանջանեան
Անդամ-քարտուղար՝ Գ. Աղադադեան

ՆԵՐՍԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեկ դիւեր, փետրվարի 2-ին, Ռուսաց գործակալութեան միջոցով, Լոնդոնից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Times» լրագրին հեռագրում են, որ բոլոր դեպքանքները որոշել են սրանից յետոյ հայոց հարցի առիթով Բ. Գրան անեի առաջարկութիւնները կատարել ռուսաց դեսպանի միջոցով:
Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին՝ Պետերբուրգում և Մոսկովայում երկու գրադիտական մասնաժողովներ կային, մէկը «Ազատ տնտեսական ընկերութեան» կողմ, միւսը «Մոսկովայի գիւղատնտեսական ընկերութեան» կողմ: Այդ մասնաժողովները այժմ ենթարկվել են լուսաւորութեան միջնորդութեան, և նրանց գործունեութեան համար մշակվում է նոր կանոնադրութիւն: Մինչև այդ կանոնադրութեան հաստատվելը՝ մասնաժողովներն նիստերը պէտք է թողնալ իրարեւորութեան հետ: Միջնորդութեան կողմից, որին պէտք է ներկայացվեն նիստերի ծրագիրները: Պետերբուրգի մասնաժողովի գործողներին մէջ մեծ փոփոխութիւններ տեղի կունենան, որովհետև նախկին գործողներից շատերը հեռացել են և պէտք է նրանց տեղ նշանակվեն նորերը:
Մեր ծերունի ժողովրդական գրող Ղազարոս Աղայանն այս օրերս Թիֆլիսից տեղափոխվեց խաչքն դիւղը, որ իր ծննդավայրն է:
Փետրվարի 1-ին, առաւօտեան 9 ժամին, Ներսիսեան դպրոցում ընտանեկան և համեստ կերպով տոնվեց Վաղարշապատի նահատակութեան տօնը: Աշակերտները կարգադրեցին ձուներ և ոտանաւորներ, նուիրված այդ տօնին, աշակերտական խումբը երգեց մի քանի կրօնական և աշխարհական երգեր, քառամասնի և սօլօ: Հանդէսը վերջացավ 9 3/4 ժամին:
Մեկ հաղորդում են, որ Թիֆլիսի Նորաշէնի եկեղեցու նախկին երէցփոխ Կոստանդին Զարուբինեանի փոխարէն, երէցփոխի պաշտօնի համար ընտրվեց երկաթագործ փաստաբան Ա. Բարխուդարեան:
Մենք ստացանք Պետերբուրգից մի նոր գիրք, «Կերկիս» անունով: Այս գրքի մասին կաշխատեմք մի քանի խօսք ասել «Մշակի» յաջորդ համարներից մէկում:
Այս օրերս Թէհրանից Թիֆլիս է եկել մի երիտասարդ, հօր կողմից չլէզ, մօր կողմից պարսկի, և մտադիր է Թիֆլիսում մի քանի ներկայացուցիչներ տալ: Պարտնը, անունով Ալեքսան Լօրից, որ Պարսից չափի պալատական արտիստն է, ինչպէս հաղորդում են և տեղական լրագրիցները:

առաջ է կոչում մեռած մարդկանց ուրուակները, կտրում է իր մարմինը, ամբողջ քորոցներ է խրում մարմնի մէջ, առանց զգալու որ և է ցաւ: Նա ներշնչում է մարդկանց գինի չը խմել՝ եթէ արեւցող են, չը ծխել և այլն: Թիֆլիսից նա մտադիր է գնալ Բաթում:
ԲԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Մեղի ունեցաւ Մարգարիտական Ընկերութեան տարեկան ժողովը, դպրոցի նոր շինությունը հասնում է ժողովին ներկայ էին բաւական թւով անդամներ: Իրական սեռի ներկայացուցիչները մի քանի հոգի էին միայն: Հերթական հարցերը վճռվեցին համարեա առանց վիճաբանութիւնների: Թաղաւորում էր Լուեւու ընդհանուր տրամադրութիւնը:
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԶԵՅԹՈՒՆԻ ԴԵՊՐԵՐԸ

Այժմ, երբ Զէյթունի խնդիրը վերջանալու վրա է, երբ թիւրքացի կառավարութիւնը համաձայնել է բանակցութիւններ անել, հաշտութեամբ վերջանալու գործը՝ սկսում են երկու մանրամասնութիւններ այն դէպքերի մասին, որ տեղի են ունեցել Զէյթունում: «Биржевые Ве-домости» լրագիրը իր 28-րդ համարում հետեւեալն է պատմում Բաշրի-փաշայի յարձակումների մասին:
«Բաշրի-փաշան ուղարկեց զէյթունցիներին մօտ մի պատգամաւոր, առաջարկելով արձակել գերի բռնված թիւրք զինուորիկներին: Զէյթունցիները այնպէս ցոյց տուին, որ համաձայն են, և իբրև վարձատրութիւն պահանջեցին պաշարեղէն:
«Բաշրի-փաշան կարծում էր արդէն, որ Զէյթունի նուաճումը աշոլովելու վրա է, և պատուիրեց կատարել պահանջը: Մի քանի հարիւր զինուորի հազմներ տուց համալսերի շրջեր և ուղարկեց տուրքներով պաշար դէպի Զէյթունի բերդը: Վերի շրջերի տակ թաղարած էին դէշերը՝ դաշտերը և ատրճառակները: Զինուորիկները պէտք է յարձակվեին Զէյթունցիների վրա՝ հենց որ նրանք դուրս գային բերդից տուրքները վերցնելու: Սակայն հայերը զինվելով ընկան և սկսեցին զինուորիկներին հետ կոխ, որի միջոցին կտորվեցան մինչև 700 թիւրք:
«Գրանից յետոյ չուտով Բաշրի փաշան ինքն էլ գերի ընկաւ: Նա առաջարկեց, որ իրան գնալ կանոն անեն իբրև զինուորի, բայց չը համաձայնեցին: Դա այն Բաշրի փաշան է, որի գործամբ առաջ եկաւ Տրապիզոնի կոտորածը: Այժմ գերի է ընկել և Զեքի փաշան:
«Զէյթունը անառիկ է. նա փորը Ասիայի Զեր-նօգօրիան է: Միայն սովով կարելի է ստիպել նրան անձնատուր լինել, սակայն զէյթունցիները վեց ամսվայ պաշար ունեն: Հայերի դրութիւնը շատ բաւարար է, իսկ թիւրք զինուորիկները՝ անմիջ-թարական է, և օգնութիւն չեն ստանում ոչ մի կողմից»:
Համախառն է, որ այդ վիճակի մէջ թիւրքացի կառավարութեան միայն մի ելք էր մնում՝ հաշտութիւն կայացնել զէյթունցիների հետ, և յոյս կայ, որ չուտով իրագործվի:
ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Փետրվարի 1-ին, ռուսաց գործակալութեան միջոցով, Կ. Պոլսից ստացանք հետեւեալ հեռագիրը: «Զէյթունի ապստամբների հետ սկսած բանակցութիւնները նպատաւոր հետեւեալ ունեցան»:
«Ռուսաց գործակալութեան հեռագիրը հաղորդում է, որ իրմիջեան պատրիարքը յայտնել է, թէ հայերին խմբելով ընդունել են տալիս մահ-մեռ առիթն ու թիւն: Կ. Պոլսում թէ իսկիւր-լեւան պատրիարքը, թէ հայ կաթողիկոսի պատրիարքը և թէ բողոքական ազգապետ տեղեկութիւն են ստացել, որ Բիրբիլայի հայերը, որտեղ մի քանի շաբաթ առաջ տեղի ունեցան կոտորածներ՝ պատրաստվում են ընդունել մահմադականութիւն:
Լօրդ Սոլսբերիի ճառը ընդհանուր դժգոհութիւն է առաջ բերել ոչ միայն օտար, այլ և անգլիական մամուլի մէջ. նոյն իսկ պահպանու-

ղական օրգանները չեն ծածկում իրանց անբաւականութիւնը: Շատ լրագիրներ գտնում են, որ լօրդ Սոլսբերիին մի քանի ժամանակ առաջ սուլ-թանի հասցէին ուղղած իր խիստ խօսքերից յետոյ, այժմեան խօսքերով ցոյց է տալիս, որ կամենում է յետ նահանջել և կարծէք հրաժարվում է այն բոլորից, ինչ որ ասել է առաջ: Իսկ այդ տեսակ վարմունքը անտակալութիւն է: Ամերիկական լրագիրները աւելի խիստ են քննադատում լօրդ Սոլսբերիին. նրանք գտնում են նրա վարմունքը անարժան մի պետական մարդու համար: Գերմանական մամուլը նոյնպէս յարձակվում է լօրդ Սոլսբերիի ճառի վրա, անհեթեթ է գտնում նրա արած համեմատութիւնը իրանցիկի և Տրանսվալի մէջ, և այն կարծիքն է յայտնում, թէ այդ տեսակ ապացոյցները վերական են Եւրոպայի հասարակական կարծիքի համար:

Բրիտանական հրատարակվող «Nord» լրագիրը, որ համարվում է ռուսաց դիվլոմատիայի օրգան, խօսելով անգլիական լրագիրների հաղորդած այն լուրի մասին, թէ Ռուսաստանն և Թիւրքիայի մէջ ծածուկ դաշնագրութիւն է կնքված՝ հետեւեալն է ասում. «Այդպիսի դաշնագրութիւն ոչ մի բանով չէ պատճառաբանվում: Որովհետև Ռուսաստանը միայն նպատակ ունի՝ պահպանել խաղաղութիւնը Եւրոպայում՝ նա հարկաւորութիւն չունի կնքել ում հետ և լինի պաշտպանութեան դաշնագիր: Բարեբախտաբար, Ռուսաստանը ամենալաւ բարեխաղաղ և դրացիական յարաբերութիւնները մէջ է գտնվում օսմանեան կայսրութեան հետ: Նրա բարեխաղաղ և յիստակ քաղաքականութիւնը Բ. Գրան վերաբերմամբ՝ հայոց հարցի մէջ՝ պաշտպանեց թիւրքի-ային թշնամական միջամտութիւնից, և այժմ էլ նա պաշտպանում է սուլթանի իրաւունքները մի միայն խաղաղութեան նպատակով»:

Ֆրանսիան և Միացեալ Նահանգները նոր պահանջներ են արել Բ. Գրան: Ֆրանսիական կառավարութիւնը պահանջում է հատուցումն Վէնի-Գեաղէյն վանքի կողոպտման և Սալվատոր վարդապետի սպանութեան համար: Միացեալ Նահանգները պահանջում են կէս միլիոն ֆրանկ, իբրև վարձատրութիւն թարքերի և Մարաշի մի-սիոնարներին հատցած վնասների, և բացի դրանից՝ պահանջում է, որ Բ. Գրանը անմիջապէս իր հաշուով վերանորոգի բանդված շինութիւնները:

«Frankfurter Zeitung» հաղորդում է, որ Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ դաշնագիր կնքելու խնդիրը ծագել է այդ երկու պետութիւնների մէջ՝ դեռ տարի սրանից առաջ: Երկու կողմերն ևս աշխատում էին մի որոշ համաձայնութեան գալ: Միջնորդի գեր կատարում էր Պետերբուրգի թիւրքացի դեսպան Շաքիր-փաշան: Ենթադրութիւն կար մինչև անգամ, որ երկու վեհապետները միմեանց հետ տեսակցութիւն ունենան, բայց այդ տեսակցութիւնը չը կայացաւ լոկ այն պատճառով, որ սուլթանը չը կամեցաւ թողնել Երկու-Գեաղէյն, երկու կողմով, մի գոց է իր բացակայութեան ժամանակ յեղափոխութիւն ծագել և իր եղբայր Մուրադը իր գահի վրա նստի:

Լոնդոնից հեռագրում են «Berliner Tageblatt» լրագրին, որ ազատամիտները մտադիր են պարտաւորել բացվելուն պէս դիմել կաթիկոսին և հարցմունք անել, թէ ինչի հայաստանը անօգնական զգեցին երեսի վրա: Ապաւում են, որ մեր-կացուցիներ կը լինեն՝ առաջ հայոց հարցով զբաղվող մի քանի միջնորդների և անձերի վերաբերմամբ: Ենթադրում են, որ ազատամիտների հետ կը միանան և ունիոնիստները:

«St. James Gazette» լրագրի մէջ կարդում ենք. «Չը նայելով բոլոր հերքումներին՝ անկասկած է մնում այն իրողութիւնը, թէ Միացեալ Նահանգները մտադրվել էին ուղարկել Զմիւռնիա իրանց հիւսիսային՝ առաջնորդան նաւատորմը, ծովային ցոյց անելու համար և թէ ամերիկական կառավարութիւնը որոշել էր ճանաչ գործել Թիւրքի-այի վրա: Արտաքին գործերի միջնորդը Օւնէր հաղորդել էր այս վճիռը Անգլիային, որը տուել էր իր հաւանութիւնը, և Ռուսաստանին, որը միայն բերանացի, Վաշինգտոնի իր դեսպանի միջոցով

պատասխանեց, թէ ուսաց կառավարութիւնը այդ տեսակ ցոյցի պէտք չէ զգում, որովհետեւ նա արդէն բանակցութիւններ է անում թիւրքի-այի հետ՝ հայկական նահանգներում կարգը վերականգնողական համար: Բացի դրանից ուսաց ղեկավարը աւելացրել է, որ ներկայումս Ռուսաստանի և թիւրքիայի մէջ եղած յարաբերու-թիւնները այնքան սրտազին են, որ Ռուսաստա-նը կարող է բոլորովին երաշխաւոր լինել, որ թիւրքիան կը վճարի Միացեալ Նահանգների պա-հանջած վարձատրութիւնը՝ ամերիկական միսիո-նարական ընկերութիւնների կրած վնասների համար:

Այդ յայտարարութեան հիման վրա, որը, բը-նականաբար, կարող էր ենթադրութիւն առաջ բերել, թէ Ռուսաստանի և թիւրքիայի մէջ դաշ-նադրութիւն է կապված՝ Միացեալ-Նահանգները հրաժարվեցին մտադրված ծովային ցոյցը անե-լուց:

Չէլթենի ընտելները, ինչպէս հեռագրում են «Times» լրագրին Կ. Պոլսից, յայտնել են հիւ-պատաններին, թէ նրանք պատրաստ են ղէջերը յանձնել, բայց ցանկանում են պահել իրանց որ-սորդական ղէջերը: Բացի դրանից նրանք պա-հանջում են, որ նահանգապետները և ուրիշ պաշ-տոնեաները բրիտանական զինուորին հնազանդվեն:

«Daily News» լրագիրը մի առաջնորդող յո-ղուածում ի միջի աչքը առնում է, «Լօրդ Սոլս-բերիքին, իր վերջին ձառում յայտարարեց ամբողջ բրիտանական ազգին, Եւրոպային և բոլոր աշ-խարհին, որ ինքը՝ անգլիական ազգի պիտանա ներկայացուցիչը, ամենին չէ կարծում, որ անգ-լիան պարտաւոր է պաշտպանել հայերին: Այդ յայտարարութեամբ նա ոչնչացրեց այն կապան-քը, որ ծանրացել էր Կ. Պոլսի կառավարութեան վրա, և այն հայերը, որոնք զեն չեն զոհվել ի սէր իրանց պաշտած Քրիստոսին՝ յուսահատու-թեան են դատապարտվում: Լօրդ Սոլսբերիքին զգուշի յանդգնութեամբ ստու է խօսում: Անգ-լիան պատասխանատու է փոքր-Ասիայում կատար-ված գործերի համար, նախ՝ իբրեւ մէկը այն պե-տութիւններից, որ ստորագրել է Բերլինի դաշ-նագիրը, և երկրորդ՝ իբրեւ Կիւրուսի դաշնագրու-թեան հեղինակ, որով նա ինքը պարտաւորել է անգլո-թիւրքիական թիւրքերին կենսքը և պաշտ-պանել նրան առաջակցելու և քրիստոսի յար-ձակումներից: Կրանից աւելի մեծ զիջում թիւր-քիային՝ անկարելի էր երևակայել: Լօրդ Սոլսբե-րին թիւրքիային վստահութեան քուէ տուեց:

ՎԵՐՋԻՆ ԴԵՊԻՐԵՐԸ ԲՈՂԳԱՐԻԱՅՈՒՄ

Վերջին օրերը, «Ռուսաց հեռագրական գոր-ծակալութեան» միջոցով, հետեւեալ հեռագիրնե-րը ստացանք.

Սօֆիա, 30 յունվարի: Այստեղ սպասված գեներալ-մայոր կոմս Գոլցինիչի-կուտուզով Կիլի-կիանի պալատում: Ամբողջ ճանապարհը, վիզլա-ւից մինչև պալատը, զարդարված կը լինի ուսա-կան և բոլորական դրօշակներով:

Յունվարի 30-ին կառավարութիւնը ստացաւ Կ. Պոլսից պաշտօնական տեղեկութիւն, թէ սու-թմանը ճանաչեց պրինց Ֆերդինանդին Բօլզարի-այի վեհապետ, և հրամայեց օտար պետութիւննե-րի մօտ գտնվող թիւրքաց ղեկավարներին՝ խնդ-րել այդ պետութիւնների համաձայնութիւնը:

Բօլզարական էկզարխը հասաւ և ընդունվեց բոլոր մինիստրների և բարձր հոգեւորականու-թեան կողմից: Խոսեւ բազմութիւնը ոգեւորված կերպով ողջունեց էկզարխին: Քիչ յետոյ նա գնաց պալատը ունկնդրութեան համար:

Թագաւոր Կայսրի հեռագիրը տարածված է բօլզարական բոլոր քաղաքներում և գիւղերում: Ամեն կողմից Սօֆիա ուղարկվում են բազմաթիւ պատգամաւորութիւններ: Յանկովը և իր բարե-կամները յայտարարեցին իրանց՝ պրինց Ֆերդի-նանդի կուսակիցներ: Մինչև անգամ «Սօբօրդ» լրագիրը հրատարակեց իրան ուսասիրական օրգան:

Ֆերդինանդ պրինցը, երջանիկ լինելով որ ստացաւ Թագաւոր Կայսրի հեռագիրը՝ դիմեց Պետերբուրգ խնդրելով թող տալ, որ պալա-տում իջնեն կոմս Գոլցինիչի-կուտուզովը և ղեկա-

ւորակական ազնւոյ Չարեկովը: Պրինցի խն-դրը ընդունված է: Ռուսաց ցարի ներկայացու-ցիչներին թաղաւորական ընդունելութիւն ցոյց կը տան:

Ֆրանսիական հիւպատոս Լալէն յայտնեց բօ-լզարական կառավարութեան, թէ ինքն հշտակ-ված է Ֆրանսիայի կողմից ներկայացուցիչ Բօրի-սի մկրտութեան հանդիսի ժամանակ:

Վիեննայի լրագիրները, ըննելով Ֆերդինանդ պրինցի Բօլզարիայի վեհապետ ճանաչվելը սու-թմանի կողմից՝ չեն կատկածում, որ միւս պե-տութիւններն ևս կը ճանաչեն նրան: «Neue Freie Presse» ասում է. թիւրքաց ղեկավարու-թիւնը գիտար թէ Լուրջ արգելքի հանդիպի կոմս Գոլուխովսկու կողմից, որովհետեւ Աւստրո-Ունգարիան երբեք Ֆերդինանդին «յարիշտակիչ» չէ համարել:

«Սակայն միւս կողմից Աւստրո-Ունգարիան պէտք է հոգա տանի, որ ամենքը իմանան, թէ նա ճանաչել է Ֆերդինանդին միայն՝ իրապէս անկախ Բօլզարիայի իշխան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվարի: Ներքին խորհու-րան իշխան Մ. Գորչակովը, ուսաց արտակարգ ղեկավարը և լրագոր մինիստրը Սլաւոյայուս, արձակված է բոլորովին ծառայութիւնից:

ՄԱՊՐԻԿ, 31 յունվարի: Խնամակալ Թագուհու ներկայացուցիչը՝ Նոյա Կայսերական Մեծութիւն-ների արքայան թագադրութեան ժամանակ կը լինի Նիէրա դուքսը:

ՊԱՐԻՋ, 31 յունվարի: Սենատում Մօնիս պատգամաւորը խորհրդ քաղաքներ, թէ ինչու հարաւային երկաթուղիների գործը ընտել դա-տաստանական ընտել հեռացրվել է և նրա տեղ նորը նշանակվել, այդ բանը Մօնիս համարում է մայրիկի: Արքայադատութեան մինիստր Իկար ասպոցուցանում էր, թէ օրինաւոր է իր արածը: Մօնիս առաջարկեց հերթական հարցերին անց-նելու բանաձեւը, որով ցաւ է յայտնվում մինիստրի ձեռք առած ապօրինի միջոցի մասին Բուրժուան պահանջում է պարզապէս հերթական հարցերին անցնել, երկաթուղիով, թէ Մօնիսի առաջարկած բանաձեւ այն կարծիքն առաջ կը բերի երկրի մէջ, թէ սենատը չէ ցանկանում յարուցանել այդ գործը: Հերթական հարցերի պարզապէս անցնե-լու առաջարկութիւնը մերժվեց 158 ձայներով ընդէմ 95-ին: Սենատը քուէարկեց հերթական հարցերին անցնելու այն բանաձեւը, որով պա-հանջում է գործը պարզել, և ցաւ է յայտնվում սահմանված կանոններից չեղվելու մասին, 161 ձայնով ընդդէմ 67-ին: Սենատի նիստից յետոյ խոր-հրդակցութեան համար Բուրժուան պալատում հաւաքվեցին մինիստրները, բայց ոչ ոք կարինե-տի հրաժարականի մասին հարց չը բարձրացրեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 փետրվարի: Յունվարի 31-ին ջմեռային պալատում Նոյա Մեծութիւնների մօտ տեղի ունեցաւ չորրորդ պարահանդէսը:

ԼՕՆԴՈՆ, 1 փետրվարի: Թագուհու դահլիճն ճառը աչքի է ընկնում իր ծայրայեղ չափաւոր լիզուով: Այնու ամենայնիւ, հասարակութիւնը գտնում է, որ օտար պետութիւնների հետ ու-նեցած բարեկամական յարաբերութիւնների մա-սին յիշված է անվստահ և անհաստատ կերպով: Թէ այդ և թէ այն պատճառով, որ ճառի մէջ խօսվում է այն մասին, թէ հանգամանքները պահանջում են աւելացնել ծախսերը կայսրութեան պաշտ-պանութեան համար՝ անգլիական հասարակու-թիւնը գտնվում է յաղված տրամադրութեան մէջ:

ՊԱՐԻՋ, 1 փետրվարի: Մինիստրական ճգնա-ժամը, ըստ երևոյթի, անցած է: Սենատի վրձ-ոյց յետոյ, Մօնիսի հարցապնդման առիթով, մինիստրութեան հակառակորդները սպասում էին, որ արքայադատութեան մինիստր Իկար հրաժարական կը տա: Մինիստրութիւնը սա-կայն իր կատարեալ համաբաշխութիւնը յայտ-նեց:

Արտօնին կը բերեն Պարիզ չաբաթ օր: Վա-խենաւոր մերկայութեան, պանամիսները պա-տաստվում են մի ընդհանուր ձակապատարտ հրա-տարակի մինիստրութեան դէմ պատգամաւորնե-րի պալատում:

ՍՕՖԻԱ, 1 փետրվարի: Արտակարգ գնացող եկան սուլթանի արտակարգ ղեկավարները, նոր նշանակված՝ Սօֆիայի թիւրքաց կոմիսար Եադի-բէյի հետ: Գնացանութիւնը ընդունեցին Կորու-ր-գեան պրինցի Փիլիպ-պիտոսնար, մինիստրնե-րը, ազգային փողովի նախագահը՝ բոլոր պա-տգամաւորներին հետ միասին, բօլզարները և մու-սուլմանները:

Վիեննա, 1 փետրվարի: «Politische Corres-pondenz» ասում է. թիւրքիայի ներկայացուցիչ-ները Բերլինի դաշնագիրը ստորագրող պետու-թիւններից խնդրում են այդ պետութիւն-ների համաձայնութիւնը պրինց Ֆերդինանդին Բօլզարիայի իշխան ճանաչելու համար: Թիւրքաց

կառավարութեան համապատասխան յիշատակա-գիրը երէկ յանձնվեց Վիեննայի կաբինէտին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ

ԳԱՆՁԱԿ. Խոսնակ խոջայեանց. «Մշակ» ձեր անունով ուղարկվում է Գօրիս:

ՎՕՊԵՆՍԻԱ, Աւստրո-Հայկադեանց: «Մշակ» ձեզ ուղարկվում է կանոնաւոր պահանջեցեք այդ-տեղի պատից:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ
Շաբաթ օր, փետրվարի 3-ին
Կը արվի
ՁՐԻ ԵՒ ԷԺԱՆԱԳԻՆ ԶԱՇՏԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

ԿՕՆՅԵՐՏ

Բարեհաճ մասնակցութեամբ արկին Ա. Միլի-տինայի, իշխ. Կ. Գուրաւովայի, Իրիւմանի, պա-րոններ՝ Պալասովի և Մեխիլի:

Կօնյերտից յետոյ՝ Պ. Ա. Բ. Ե. Բ.
Տօմսկները (4 ր. 10 Կօպէկից մինչև 1 ր. 10 Կ.) փաճաւովում են Տէր-Սարգսեանի խանութում և Ժողովարանի չիլեցարի մօտ: 1—1

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԳԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՌՕՏԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 Ժ. վիրաբու-ժութեան, սիֆիլիս և վնասական հիւանդու-թիւնների:

Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 Ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԷԱՍ—ԲՈՒՆԵՆԿՈ—10—11 Ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 Ժ. ականջի, կո-կորդի, քիթի և կրծքի հ. երկուշարթի, չորեքշա-թի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 Ժ. ներքին, երե-կայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և չաբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ Ժ. ներքին և երե-կայոց հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 Ժ. երեքշ. հինգշ. և չա-բաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 Ժ. երկուշաբ թի չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 Ժ. Սիֆիլիսի, մէղի և ուսական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէղի, խիւի, ա-րեան, կաթի և այլն:

Վճար 50 Կ.: Համակարգի (Կօնյիլուովի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ

ՀՕՄԵԼՊԱՏԻՍԿԱՆ ԴԵՂԱՏՈՒՆ

Բացված է պատշաճաւոր թոյլաւորութեամբ, 1896 թ-ի, յունվարի 27-ից
ԹԻՖԼԻՍՈՒՄ, Գօրոլինսկի պրօպեկտի և Կրուզնոյեների փողոցների անկիւնում, տուն
Գօրթանակու, № 18/1:
Պրէյս-կուրանտի համառօտութիւնը, ըստ պահանջին, ուղարկվում է ցրի:
ՀԱՍՅԷՆ } Ն ա մ կ ն եր ի հ ա մ ար } Гомеопатическая аптека, Тифлисъ,
} Головинский проспектъ, д. Добржанскаго, № 18/1.
(№ 14) } Հ ե ա գր եր ի հ ա մ ար } Тифлисъ, Гомеопатическая аптека.
1—3

ԱՆԴՐԵԱՆՎԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

հրաւիրում է ցանկացողներին երկաթուղու ծառայողների և երկաթուղական զարրոցների աշակերտ-ների համար հագուստեղէն հայթայթելու մի և երեք տարի ժամանակով:
Նրանք, որոնք ցանկանում են այդ մասին յայտարարութիւններ տալ՝ պէտք է ի նկատի ու-նենան հետեւեալը.

- 1) Ընդհանուր Ատենին (Թիֆլիս, Ելիսավետինսկայա փողոց, սեփական տուն) յայտարարու-թիւններ տալու համար նշանակվում է ժամանակամիջոց ներկայ տարվայ փետրվարի 28-ի ցերեկվայ ժամի 12-ը:
- 2) Յայտարարութիւնները պէտք է տրված լինեն ծրարների մէջ, որոնց պէտք է կրքել զը-մուռով, ծրարների վրա պիտի լինի մակագրութիւն. «Заявление пѣнѣ на поставкѣ обмунди-рованія».
- 3) Այն անձինք, որոնք կամենում են մասնակցել մրցութեան՝ պիտի մինչև յայտարարու-թիւնները ըննելու օրը ներկայացնեն նախապէս դրամական՝ 1000 ռուբլի:
- 4) Հագուստեղէնի ամբողջ քանակութեան արժէքն է մօտաւորապէս 70,000 ռուբլի տարբեր:
- 5) Հագուստեղէնը պէտք է մատակարարել այն վաւերացրած նմանների համաձայն, որոնք պահվում են երկաթուղու տնտեսական գլխաւոր պահեստում, Թիֆլիսում:
- 6) Պայմանները և մրցանակի թուղթը ստանալու համար պէտք է դիմել երկաթուղու տնտե-սութեան գրասենեակը (Թիֆլիս, Ելիսավետինսկայա փողոց, սեփական տուն): Օտար քաղաքացի-ները թող բարեհաճեն պահանջել պայմանները հեռագրով:
- 7) Երկաթուղու վարչութիւնը իրաւունք ունի ընտրել հագուստեղէնի հայթայթիչ և այն մարդուն, որ ամենացած քննել չէ յայտնել:
- 8) Մրցութեան վերջնական վաւերացումը կախված է պետական երկաթուղիների վարչու-թիւնից, որ գտնվում է Պետերբուրգում:

(№ 13) 2—3

1895 թ. նոյեմբերի 10-ից ստացվել է ՊԱՍՏԵՐՈՒ ՍԻՍՏԵՄՈՎ պատրաստած
ԲՐՈՒՍԱՅԻ ԲՕԺՕԺԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ
որ արդէն անցեալ տարիներից յայտնի է կովկասում և Պարսկաստանում՝ իր յատկու-թիւններով, և տուած առատ բերքով, «ԷԿՕՆՕՄԻԿԵՍ» Ֆերմայից:
Յանկացողները կարող են պահանջել Թիֆլիսի Շիրամպապահութեան կայարանում՝
ըննելուց յետոյ:
Գնել ցանկացողները կարող են դիմել՝ ԲԱՌՈՒՄ, ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԵԶԵ. ՄՆԱՅԱԿԱ-ՆԵԱՆՅԵՆԻՆԻ, Իսկ ՆՈՒԻԻՒ ԱՂա Մուսայ Մահմեդովին:
Այս հասցեով Брат. МНАЦАКАНЯНЦЪ, БАТУМЪ կամ ТИФЛИСЪ կամ ВАНУ.
(№ 138) (Կ. չ.) 19—24

ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒՄԻ ԴԵՄ

Բժշկական ղեկարամանից թոյլա-տրված

ՕԼԶԱԿՏՐՈՒՄ ՆՈՒԳԻ-ԼԻՆ

Մ. Լ. Ժ Ի Ր Մ Ո Ւ Ն Ս Կ Ո Ւ
Ծախվում է 40 Կօպէկով

Գեղադործական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ՝ Թիֆլի-սում:
(№ 22) 27—30